



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

N _____ 2012 թ.

<Տեր-Զոր> ՍՊԸ տնօրեն

պարոն Է.Սիմոնյանին

հասցե՝ Վայոց Ձորի մարզ, գ.Արենի

պատճենը՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ պետ

պարոն Ա.Օհանյանին

Կից ուղարկվում է Ձեր 12.01.2012թ. գանգատի վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 03.02.2012թ. թիվ 5/5 որոշումը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարկային մարմնի գանգատարկման
հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ

«Կատավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/5

3 փետրվարի 2012թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 24.01.2012թ-ի նիստում քննության է առնվել «Տեր-Ջոր» ՍՊԸ 12.01.2012թ. գանգատը «ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ 30.12.2011թ. թիվ 2109037 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՀՏ պետի 12.12.2011թ. թիվ 2204617 հանձնարարագրի «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Տեր-Ջոր» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է հսկիչ-դրամակղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում 29.12.2011թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2204617 արձանագրությունը, որով մասնավորապես նշվել է, որ հարկային տեսուչ Սամվել Մուրադյանի կողմից 23.12.2011թ-ին ժամը 12-02-ին ՎՁՄ գ.Արենի հասցեում գտնվող «Տեր-Ջոր» ՍՊԸ-ին պատկանող բենզալցակայանից կատարվեց հսկիչ գնում 1000 դրամի չափով՝ 2.1 լիտր բենզին, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Վաճառող Միասնիկ Խաչատրյանը գումարը չմուտքագրեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրեց: Հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 12-03-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց «Z» հաշվետվություն 91520 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո 1-ին վաճառքը 22.12.2011թ. ժամը 10-51-ին էր և վերջին վաճառքը 23.12.2011թ. ժամը 08-29 ընդհանուր էր: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 1000 դրամը, ժամը 12-08-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 12-09-ին նորից դուրս բերվեց «Z» հաշվետվությունը՝ 1000 դրամ ընդհանուր գումարով:

Գնված ապրանքը հետ վերադարձվեց տնտեսվարող սուբյեկտին և ետ ստացվեց հսկիչ գնման գումարը, որից հետո տպվեց վերադարձի կտրոնը կատարված վճարման արժեքի չափով:

Ուսումնասիրությամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են «Կատավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամակղային մեքենաների կիրառման մասին» «Օրենքով սահմանված կարգով:

Հիմք ընդունելով հսկիչ գնման ընթացքում ձեռք բերված ապացույցները «ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՀՏ պետի կողմից 30.12.2011թ-ին հրապարակվել է թիվ 2109037 հանձնարարագիրը, որի համաձայն «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում ընկերությունում կատարվել է հսկիչ-դրամակղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում 30.12.2011թ-ին կազմվել է թիվ 2109037 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 150 000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հիմք ընդունելով տնտեսվարող սուբյեկտի մոտ «ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 12.12.2011թ. թիվ 2204617 հանձնարարագրով կատարված հսկիչ գնման ուսումնասիրության արդյունքում կազմված թիվ 2204617 արձանագրությունը, որով արձանագրվել է «Կատավարության 26.08.2004թ. թիվ

1325-Ն որոշմամբ հաստատված ՀԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի պահանջների խախտման փաստը և ղեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի և «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի դրույթներով «Տեր-Ջոր» ՍՊԸ-ին «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 150 000 դրամի չափով: Նշված տուգանքը երկամսյա ժամկետում չվճարելու դեպքում կրկնապատկվում է:

«Տեր-Ջոր» ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

ՏՀՏ աշխատակիցները վառելանյութի վաճառքի կետ են ժամանել ժամը 12-00-ին, այդ պահին վառելանյութի վաճառքի կետում գտնվել է վառելանյութի լիցքավորող Մյասնիկ Գասպարյանը: Առանց որևէ գնում կատարելու ՏՀՏ տեսուչները ներխուժել են լիցքավորողի աշխատասենյակը, որտեղ տեղադրված է ընկերության ՀԴՄ-ն: Արմեն Սաֆարյանի կողմից ժամը 12-03-ին դուրս է բերվել <Z> հաշվետվությունը՝ 91520 դրամ ընդհանուր գումարով: <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո ժամը 12-08-ին 1000 դրամը մուտքագրվել է ՀԴՄ, ժամը 12-09-ին նորից դուրս է բերվել <Z> հաշվետվությունը՝ 1000 դրամ ընդհանուր գումարով:

Նշված գործողությունները կատարելուց հետո ՏՀՏ աշխատակիցները հայտարարել են, որ առկա է հանձնարարագիր, չպարզաբանելով, թե ինչ հանձնարարագրի մասին է խոսքը, այն չի ներկայացվել ընկերության տնօրենին և չի տեղեկացվել ստուգման ակտի մասին:

2012թ-ի հունվարի 4-ին փոստով ստացվել է ՏՀՏ կողմից ուղարկված նամակը, որում առկա է եղել 12.12.2011թ-ի թիվ 2204617 հանձնարարագիրը, հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն արձեռն չի ներկայացվել, ինչպես նաև արձանագրություններ: Նույն ծրարում առկա էր նաև ստուգում կատարելու վերաբերյալ 30.12.2011թ-ի թիվ 2109037 հանձնարարագիրը:

Ըստ գանգատի, առանց հսկիչ գնում կատարելու ապօրինի ՀԴՄ-ից դուրս բերված փաստաթղթերի հիման վրա ստուգման ակտով արձանագրվել է 150 000 դրամի տուգանք:

Ընկերությունը գտնում է, որ տուգանքի գումարն առաջադրվել է ապօրինի կարգով և խնդրում է հարցին տալ օրինական լուծում:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով) լսելով ընկերության տնօրենի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում հարկային տեսուչ Սամվել Մուրադյանը նշեց, որ իր կողմից 23.12.2011թ-ին ժամը 12-02-ին ՎՁՄ գ.Արենի հասցեում գտնվող «Տեր-Ջոր» ՍՊԸ-ին պատկանող բենզալցակայանից կատարվել է հսկիչ գնում 1000 դրամի չափով: Մասնավորապես, գնվել է 2.1 լիտր բենզին, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով, սակայն վաճառող Միասնիկ Խաչատրյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Այնուհետ ժամը 12-03-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել <Z> հաշվետվություն 91520 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման արժեքը ներառված չի եղել: Ընդ որում, <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո պարզվել է, որ 1-ին վաճառքը 22.12.2011թ. ժամը 10-51-ին էր և վերջին վաճառքը 23.12.2011թ. ժամը 08-29 րոպեին: <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը ժամը 12-08-ին մուտքագրվել է ՀԴՄ, դուրս է բերվել կտրոն և ժամը 12-09-ին նորից դուրս է բերվել <Z> հաշվետվությունը՝ 1000 դրամ ընդհանուր գումարով: Որից հետո գնված ապրանքը հետ է վերադարձվել և ետ է ստացվել հսկիչ գնման գումարը, որից հետո տպվել է վերադարձի կտրոնը կատարված վճարման արժեքի չափով:

Ընկերության տնօրենը նշեց, որ հիշատակված բենզալցակայանում շահագործվող սարքերը տեղադրվել են դեռևս ԽՍՀՄ ժամանակներում և դրանցով բացառվում է 1000 դրամի բենզինի լիցքավորման հնարավորությունը: Հաշվի առնելով այդ հանգամանքն

ընկերության տնօրենը գտնում է, որ նման գումրի և քանակության վառելանյութի գնում ընկերությունից չի կատարվել:

Քննարկման ընթացքում պարզվեց նաև, որ ուսումնասիրության պահին արձանագրվել է, որ նախորդ օրվանից ՀԴՄ-ի հիշողությունը չի մարվել:

Ընկերության տնօրենին ուղղված հարցին, թե ինչպես կարող է բացատրվել նշված հանգամանքը, հնչեց պատասխան, որ բենզալցակայանի աշխատակիցը չունի բավարար գիտելիքներ ՀԴՄ-ն սահմանված կարգով շահագործելու համար:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում ընկերության կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որի համար կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պատասխանատվության միջոցը:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ: Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է հետևյալ եզրակացությունը.

<Տեր-Զօր> ՍՊԸ կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ 30.12.2011թ. թիվ 2109037 ստուգման ակտի վերաբերյալ ներկայացված դիմում-գանգատը համարել ոչ հիմնավոր և համաձայնություն տալ դրա վերաբերյալ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից գանգատարկման խորհուրդ ներկայացված որոշման նախագծին:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:



Հանձնաժողովի նախագահ

S.ՔԱՐՍԵՂՅԱՆ